



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Երևան, Կառավարական պոստ 1

Ո Ր Ո Շ ՈՒ Մ № 03/12

(Ա/Ձ Ժիրայր Ավագյանի 05.12.2017թ.-ի վարչական բողոքը մերժելու մասին)

Ք. ԵՐԵՎԱՆ

«22» դեկտեմբերի 2017թ.

ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովը՝ նախագահությամբ ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի, ուսումնասիրելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 03.10.2017թ. թիվ 54/2 որոշման վերաբերյալ անհատ ձեռնարկատեր Ժիրայր Ավագյանի 05.12.2017թ.-ի վարչական բողոքը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Բողոքի էությունը և ներկայացված պահանջը.

Անհատ ձեռնարկատեր Ժիրայր Ավագյանը (այսուհետ նաև՝ Բողոք բերած անձ կամ Ա/Ձ) բողոք է ներկայացրել ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով (այսուհետ՝ նաև Հանձնաժողով)՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Գանգատարկման հանձնաժողով) 03.10.2017թ. թիվ 54/2 որոշման վերաբերյալ:

Բողոքը մուտքագրվել է Հանձնաժողովի քարտուղարություն 05.12.2017թ.-ին, իսկ պահանջի հստակեցման վերաբերյալ դիմումը՝ 11.12.2017թ.-ին:

Բողոք բերած անձը նշել է, որ 14.06.2017թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոն ՀՏ-ի կողմից կազմվել է թիվ 2136169 ակտը, որի հիման վրա իր նկատմամբ կիրառվել է տուգանք՝ 500.000 ՀՀ դրամի չափով:

Բողոք բերած անձը նշել է հետևյալ հիմնավորումները՝

- դրոշմապիտակների վերադրման ընթացքում իր կողմից թույլ է տրվել մի քանի վրիպակ, որն անուշադրության հետևանք է.

- իրականացրել է բողոքարկում, իրավաբանական վարչությունում կայացվել է թիվ 348270 որոշումը, իսկ Գանգատարկման հանձնաժողովի կողմից 03.10.2017թ. թիվ 54/2 որոշումը, բայց որոշումը թողնվել է անփոփոխ.

- նշված վրիպակներն իր նկատմամբ որևէ հարկային պարտավորություն չեն առաջացրել, հետագայում վրիպակներն իր կողմից ուղղվել են.

- օրենքի նշված կետը կարելի է չեղարկել, քանի որ ներկրման դեպքում ամբողջ տեսականին ֆիքսվում է ՀՀ սահմանին.

- խնդրել է իր նկատմամբ տույժ չկիրառել, քանի որ նախապես չեն զգուշացրել, իսկ դրոշմապիտակները փակցվել են անհրաժեշտ տարաների վրա:

Ելնելով վերոգրյալից Բողոք բերած անձը խնդրել է անվավեր ճանաչել Գանգատարկման հանձնաժողովի 03.10.2017թ. թիվ 54/2 որոշումը:

2. Մասնակցի դիրքորոշումը.

Բողոք բերած անձի դիրքորոշումը հստակեցնելու նպատակով Հանձնաժողովը 2017թ.-ի դեկտեմբերին 22-ին անցկացրել է լսումներ, որին ներկայացել էր Ա/Ձ Ժիրայր Ավագյանը:

Վերջինս լսումների ընթացքում հայտնեց, որ պնդում է բողոքը. Բողոք բերած անձի կողմից նոր փաստարկներ և փաստաթղթեր չներկայացվեցին:

3. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Բողոք բերած անձի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գտնում ենք, որ սույն դիմումի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

3.1. Կենտրոնի ՀՏ պետի 06.03.2017թ. թիվ 2136169 հանձնարարագրի հիման վրա Ա/Ձ Ժիրայր Ավագյանի մոտ 03.04.2017 - 31.05.2017թթ. իրականացվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) և հսկիչ նշանների (դրոշմապիտակների) կիրառման ճշտության ստուգում:

3.2. Ստուգման արդյունքում 14.06.2017թ. կազմվել է թիվ 2136169 ստուգման ակտը:

3.3. Ստուգման ակտի 2-րդ կետի համաձայն. «Հսկիչ նշանների (դրոշմապիտակների) կիրառման ճշտության ստուգման մասով պարզվեց.

Ըստ հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տվյալների և Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի հարկ վճարողի կողմից 2015-2016թթ. ընթացքում ՀՀ տարածք է ներմուծվել պարտադիր դրոշմավորման ենթակա ԱՏԳ-0402 ծածկագրին դասվող «խտացրած կաթ» 1.450 գրամ տարողության 300 հատ, 1.000 գրամ տարողության 4.500 հատ, 500 գրամ տարողության 9.188 հատ: Ա/Ձ-ի նշված տեսականու ապրանքային մնացորդը 03.04.2017թ. դրությամբ կազմում էր համապատասխանաբար՝ 162 հատ, 480 հատ, 936 հատ: Վերը նշած ժամանակահատվածի ընթացքում մանրամեծածախ առևտրի միջոցով իրացվել է խտացրած կաթ 1.450 գրամ տարողության 138 հատ, 360 դրամ միջին գնով /49.680 դրամի/, 1.000 գրամ տարողության 4.014 հատ, 340 դրամ միջին գնով /1.364.760 դրամի/ և 500 գրամ տարողության 8.252 հատ, 200 դրամ միջին գնով /1.650.400 դրամի/, ընդամենը՝ 3.064.840 դրամ: Սակայն 2015-2016թթ. համար 03.04.2017թ. դրությամբ VERO համակարգ է մուտքագրել 252.970 հատ դրոշմապիտակներ, այդ թվում՝ 370 գրամ տարողության 251.037 հատ, 270 գրամ տարողության 1.933 հատ: Ստուգման ընթացքում պարզվել է, որ 03.04.2017թ. դրությամբ Ա/Ձ-ի պահեստային մասում առկա էր ապրանքների չփակցված հարկային մարմիններից ստացված 272 հատ /Բ-050186716-0501867432/ հերթական համարների դրոշմապիտակները, որոնք 28.11.2016թ. մուտքագրվել են VERO համակարգ որպես 370 գրամ տարողության խտացրած կաթ, իսկ մաքսային մարմիններից ստացված 372 հատ /Բ-0379763115-0379762743/ հերթական համարների դրոշմապիտակներ 26.09.2016թ. մուտքագրվել են որպես 720 գրամ տարողության պահածոյացված ոլոռ: Այսպիսով, Ա/Ձ ժիրայր Ավագյանի կողմից խախտվել է «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9.3 հոդվածի 4-րդ ենթակետի 1-ին պարբերության պահանջները»:

Ստուգման ակտի վերջում առկա են միայն ստուգող պաշտոնատար անձանց անունները և ստորագրությունները, ինչպես նաև գրառում՝ հետևյալ բովանդակությամբ. «Հրաժարվեց ակտի օրինակը ստորագրելուց և ստանալուց»:

3.4. ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչությունը 08.08.2017թ. կայացրել է «Վարչական իրավախախտումների գործի վերաբերյալ» թիվ 348270 որոշումը՝ Ա/Ձ ժիրայր Ավագյանի նկատմամբ 500.000 ՀՀ դրամի չափով վարչական տույժ կիրառելու վերաբերյալ:

Նշված որոշման համաձայն՝ «Ա/Ձ ժիրայր Ավագյանը (ՀՎՀՀ՝ 37425729, անձնագիր՝ AM0337404, հասցե՝ ք. Երևան, Բրյուսովի պ. 19-9), համաձայն ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի Կենտրոնի հարկային տեսչության աշխատակիցների կողմից կազմված 14.06.2017թ. թիվ 2136169 ստուգման ակտի խախտել է ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորման կանոնները, այն է՝ առանց դրոշմապիտակների վերաբերյալ սահմանված կարգով էլեկտրոնային գրանցման կատարման կամ դրոշմավորման ենթակա ապրանքները ոչ այդ արտադրատեսակի դրոշմավորման համար դրոշմավորված ակցիզային դրոշմանիշներով և (կամ) դրոշմապիտակներով դրոշմավորված, ինչպես նաև որոշակի տարողության համար տրամադրված ակցիզային դրոշմանիշներով իրացրել է ապրանքներ:

Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244, 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին կետով՝ որոշեցի. «Համաձայն ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 170⁹ հոդվածով ժիրայր Ավագյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակել տուգանք՝ 500000 (հինգ հարյուր հազար) դրամի չափով»:

3.5. Բողոք բերած անձը 13.09.2017թ. վարչական բողոք է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային հարցերով գանգատարկման հանձնաժողովին՝ խնդրելով անվավեր ճանաչել իրավաբանական վարչության ակտի 08.08.2017թ. «Վարչական իրավախախտման գործի վերաբերյալ» թիվ 348270 որոշումը:

3.6. Գանգատարկման հանձնաժողովի 03.10.2017թ. թիվ 54/2 որոշմամբ գանգատը մերժվել է:

3.7. Գործի նյութերում առկա փոստային թիվ AG 004697468AM անդորրագրի համաձայն, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն ծանուցում է կատարել Ա/Ձ ժիրայր Ավագյանին, որը վերջինիս կողմից ստացվել է 13.10.2017 թվականին:

4. Պատճառաբանություններ և եզրահանգումներ.

Բողոքի և դրա քննարկման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ **բողոքն անհիմն է և ենթակա է մերժման** հետևյալ հիմնավորմամբ.

Սույն գործի տեսանկյունից Հանձնաժողովն էական է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը՝ արդյո՞ք 14.06.2017թ. կազմված թիվ 2136169 ստուգման ակտում ամրագրված խախտումը բավարար հիմք կարող էր հանդիսանալ Բողոք բերած անձի նկատմամբ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 170⁹-րդ հոդվածով սահմանված վարչական տույժ կիրառելու համար:

Նշված հարցադրման շրջանակներում Հանձնաժողովն արձանագրում է այն փաստը, որ Գանգատարկման հանձնաժողովի կողմից հաստատված է համարվել թիվ 2136169 ստուգման ակտի անբողոքարկելի հանդիսանալու հանգամանքը, որի առնչությամբ Բողոք բերած անձի կողմից որևէ առարկություն չի ներկայացվել:

Նշվածի առնչությամբ Հանձնաժողովն էական է համարում հետևյալ իրավակարգավորումները՝

- **«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի համաձայն՝** գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրագեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

- **«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի** համաձայն՝ ստուգումն իրականացնող անձանց գործողությունները, ինչպես նաև ստուգման արդյունքում կազմված ակտը երկու ամսվա ընթացքում, եթե օրենքով այլ բան չի նախատեսվում, կարող են բողոքարկվել այն պետական մարմին, որին անմիջականորեն ենթարկվում է (են) ստուգող անձը (անձինք), կամ «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բողոքարկման հանձնաժողով, կամ դատարան: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ստուգման ակտը չի բողոքարկվել, այն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով դարձել է անբողոքարկելի:

- «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտը կարող է գործել անորոշ կամ որոշակի ժամկետով: Անորոշ ժամկետով ընդունված գրավոր վարչական ակտը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ չի փոխարինվել մեկ այլ վարչական ակտով կամ սույն օրենքով սահմանված կարգով անվավեր կամ ուժը կորցրած չի ճանաչվել, կամ օրենքով նախատեսված որևէ այլ հիմքով դրա գործողությունը չի դադարեցվել:

Նշվածից հետևում է, որ սույն գործի հիմքում առկա է գործողությունը չդադարած վարչական ակտ, որը գործում է անորոշ ժամկետով և որով արձանագրվել է Բողոք բերած անձի կողմից «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9.3.-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի պահանջների խախտման հանգամանքը: Նշված նորմի կանոնակարգման համաձայն. «4. Պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող և (կամ) ներմուծող՝

1) կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը (բացառությամբ սույն մասի 2-րդ կետում նշված դեպքերի) մինչև ապրանքների իրացումը (իսկ ցանկության դեպքում՝ մինչև ապրանքների արտադրությունը կամ ներմուծումը) էլեկտրոնային եղանակով կատարում են գրանցումներ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մինչև ապրանքների իրացումը էլեկտրոնային եղանակով ճշգրտումներ են կատարում այդ գրանցումներում»:

Նշված փաստի հաստատման ուժով Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 170⁹-րդ հոդվածով սահմանված վարչական տույժ կիրառելու համար անհրաժեշտ հիմքերի առկայությանը: Մասնավորապես, նշված հոդվածի համաձայն. «Ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների մեկից ավելի անգամ օգտագործման հնարավորությունը չբացառող ձևով կամ առանց դրանց վերաբերյալ սահմանված կարգով էլեկտրոնային գրանցման կատարման կամ դրոշմավորման ենթակա ապրանքները ոչ այդ արտադրատեսակի դրոշմավորման համար տրամադրված ակցիզային դրոշմանիշերով և (կամ) դրոշմապիտակներով դրոշմավորված, ինչպես նաև որոշակի տարողության համար տրամադրված ակցիզային դրոշմանիշերով և (կամ) էլեկտրոնային գրանցում կատարված դրոշմապիտակներով այլ տարողություն ունեցող տարաներով (տուփերով) տարայավորված՝ դրոշմավորված ապրանքներն իրացնելը, եթե այդ ապրանքների

ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում հիսուն հազար դրամը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով»:

Նշված զանցանքի դիսպոզիցիայից հստակ հետևում է, որ այն ներառում է **«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9.3.-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի** խախտման հատկանիշները՝ ամրագրված թիվ 2136169 ստուգման ակտում, որպիսի հանգամանքով պայմանավորված վերանում է **ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 170⁹-րդ հոդվածով** սահմանված վարչական տույժի կիրառման համար անհրաժեշտ փաստական հանգամանքների հետագա ապացուցման անհրաժեշտությունը:

Նշվածի արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ բացակայում են Գանգատարկման հանձնաժողովի 03.10.2017թ. թիվ 54/2 որոշումն անվավեր ճանաչելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածով սահմանված հիմքերը:

Վերոգրյալի արդյունքում՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 4-րդ մասի, 1-ին մասի «բ» կետի պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Անհատ ձեռնարկատեր Ժիրայր Ավագյանի 05.12.2017թ.-ի վարչական բողոքը մերժել. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 03.10.2017թ. թիվ 54/2 որոշումը թողնել անփոփոխ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ակտի ընդունման մասին վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ